

16 տարին լրացած քաղաքացիների անձնագրավորումը

Անձնագիր ստանալու համար 16 տարին լրացած քաղաքացին անձամբ ներկայանում է ԼՂՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանման անձնագրային ծառայություն:

ԼՂՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանման անձնագրային ծառայությունում քաղաքացին ներկայացնում է ծննդյան վկայական կամ մինչև 16 տարին լրանալը ստացած անձնագիր (եթե նախագորակոչային տարիքի է, ապա՝ կցագրման վկայական), 35x45 մմ չափսի երկու լուսանկար և պետական տուրքի անդորրագիր՝ 1000 դրամի չափով:

Քաղաքացու ներկայությամբ լրացվում է թիվ 1 ձևի դիմումը, որտեղ նշվում են՝

- անձնագրային գործողության տեսակը,
- դիմողի անունը, ազգանունը, հայրանունը,
- դիմողի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,
- ծննդյան երկիրը, քաղաքը, շրջանը, գյուղը,
- դիմողի սեռը, ազգությունը,

- դիմողի բնակության վայրը (հաշվառման, ժամանակավոր հաշվառման կամ փաստացի բնակության),

- դիմողի ստորագրությունը, դիմումը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը:

16-18 տարեկան քաղաքացիների հաշվառումը կատարվում է ծնողներից որևէ մեկի կամ օրինական ներկայացուցչի հաշվառման վայրում

Անձնագիրը քաղաքացուն է տրվում 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Քաղաքացին անձնագրային ծառայությունից անձնագիրը ստանում է անձամբ կամ իր կողմից լիազորված երրորդ անձի միջոցով:

Զինապարտներին անձնագիր տալու կամ փոխանակելու (բացառությամբ արտերկրում գտնվող պահեստագորայինների), ըստ բնակության վայրի հաշվառելու կամ հաշվառումից հանելու գործողությունները կատարվում են նրանց զինվորական փաստաթղթերում համապատասխան զինվորական կոմիսարիատի կողմից զինվորական հաշվառման վերաբերյալ նշումների առկայության դեպքում: